



ՀԱՅՈՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Արևոտական անվան Հայկական պետական

մասնավորթական համալսարանի ռեկտոր,

Ռեկտոր՝ *Տիգրան Մաշտոց* Սրբուհի Գևորգյան

ԿԱՐՈՒՔ

Առաջատար կազմակերպություն

Ունա Ռաֆայելի Վարդանյանի “ԶԼՄ-ների ինֆորմացիայի դերը գրոսաշրջային գրավչության ձևավորման մեջ” թեմայով ասենախոսության վերաբերյալ ներկայացված ԻԴ.03.01 “Աշխարհագրություն” մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ասենախոսության արդիականությունը: Ցանկացած զարգացած երկրի համար գրոսաշրջությունը ներկայումս ունի կարևոր նշանակություն: Ըստ երևույթի դրանով է պայմանավորված XXI դարը համարել գրոսաշրջության դարաշրջան, որը կարելի է համարել համաշխարհային տնտեսության բոլոր ոլորտների, այդ թվում նաև գրոսաշրջության ինդրուսորիայի գլոբալիզացման հետևանքը: Զրոսաշրջային տարածքի գրավչության և մրցունակության ձևավորման գործում առանձնահատուկ նշանակություն ունեն զանգվածային լրատվական միջոցները:

Աշխատանքի նպատակը և առաջարկած խնդիրները: Հայցորդ Ունա Վարդանյանը նպատակ է դրել հետազոտել ու բացահայտել ԶԼՄ-ների դերը գրոսաշրջային ժամանակակից ուղղությունների մասսայականացման, առաջխաղացման (առաջընթացի) և գրավչության ստեղծման գործընթացում:

Ասենախոսության հիմնական նպատակը, ըստ երևույթի, պայմանավորել է նաև նրա իրականացման համար անհրաժեշտ հետևյալ խնդիրների հնարավոր լուծումները.

- Վերլուծել այն գործոնների ամբողջական համակարգը, որոնք հանգեցնում են գրուաշրջային տարածքի կերպարի գրավչության ապահովմանը, և վերհանել ԶԼՄ-ների դերը գրուաշրջային դեստինացիայի բրենդի ձևավորման գործում:
- Հետազոտել գրուաշրջային մամուլի կայացման փուլերը, որպես գրուաշրջային տարածքի բրենդի ձևավորման վճռորոշ գործոն:
- Հայաստանի Հանրապետությունում գրուաշրջային հոսքերի համեմատական վերլուծություն կատարել՝ հայտնաբերելու համար ԶԼՄ-ների դերը մեր երկրում գրուաշրջության զարգացման մեջ:
- Գնահատել ԶԼՄ-ների ազդեցությունը գրուաշրջային դեստինացիայի ճանաչելիության վրա՝ բազմաչափ ռեզրեսիոն մոդելի օգնությամբ:
- Վերլուծել ԶԼՄ-ների դերը տարբեր երկրների գրուաշրջային տարածքների առաջխաղացման դրական փորձի հարցում, այդ թվում այն երկրների, որոնք ունեն ծովափ և որոնք չունեն ելք դեպի ծով:
- Հայտնաբերել երկրի կամ գրուաշրջային դեստինացիայի ճանաչելի կերպարը ստեղծող սիմվոլներ:
- Վերհանել ԶԼՄ-ների դերը տվյալ գրուաշրջային տարածքի որոշակի իմիջի ձևավորման հարցում, և հետազոտել փոխադարձ կապը այս կամ այն գրուաշրջային ուղղության հաջողության և տվյալ գրուաշրջային տարածքի իմիջի միջև:

Պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները.

- Զրուաշրջային տարածքի գրավչության հիմնական չափանիշներից է գրուաշրջային տարածքի բրենդի ստեղծումը:
- Համեմատական ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է Հայաստանի գրուաշրջային կերպարի ճանաչելիության անբավարարությունը՝ իբրև Հայաստանի Հանրապետությունից դեպի մնացած աշխարհ թույլ տեղեկատվական հասքերի արդյունք:
- Բացահայտվել է տեղեկատվական տարածքի դերը գրուաշրջային գրավչության ուժեղացման հարցում՝ ծովափ չունեցող և դեպի ծով ելք ունեցող երկրների մոտ:

4. Առանձնացվել է երկրի, ուղղոնի կամ գրոսաշրջային դեստինացիայի ճանաչելի կերպարը՝ որպես գրոսաշրջային գրավչության չափանիշ:
5. Հիմնավորվել է գրոսաշրջային տարածքի իմիջի և նպատակառուղղված տեղեկատվական հոսքերի կապը:

Ատենախոսության գիտական նորույթը.

1. Վերհանվել է մեղիա-տարածքի դերը գրոսաշրջային դեստինացիայի բրենդի ստեղծման հարցում:
2. Ներկայացվել է ԶԼՄ-ների դերը Հայաստանի Հանրապուտության՝ որպես գրավիչ (ատրակտիվ) գրոսաշրջային ուղղության մասսայականացման համար:
3. ՀՀ գրոսաշրջիկների հարցման արդյունքները մշակվել և վերլուծվել են բազմաչափ գծային ուղղեսիռն մաղելի:
4. Քննվել է մեղիա-տարածքի դերը գրոսաշրջային դեստինացիաների առաջխաղացման հարցում՝ ծովափ ունեցող և դեպի ծով ելք չունեցող երկրների մոտ:
5. Վերլուծվել և ի հայտ են բերվել այն գործոնները, մասնավորապես, երկրի կամ գրոսաշրջային դեստինացիայի սիմվոլները, որոնք ազդում են տվյալ տուրիստական տարածքի ճանաչելի կերպարը ստեղծելու վրա:
6. Վերհանվել է մեղիա-տարածքի առանցքային դերը գրոսաշրջային տարածքի որոշակի նպատակառուղղված իմիջի ստեղծման հարցում:

Ատենախոսության գործնական-կիրառական նշանակությունը.

1. Հետազոտական աշխատանքի ընթացքում ուսումնասիրվել և գիտական աստիճանի համապատասխան մակարդակով բացահայտվել են մեղիա-տարածքի ազդեցությունը գրոսաշրջային գրավչության ստեղծման վրա:
2. Ընդհանրացվել են հիմնական այն գործոնները, որոնք ուղղված են գրոսաշրջային տարածքի գրավչության ստեղծմանը:
3. Ամփոփելով հետազոտություններիարդյունքները հիմնավորված ձևերով առաջարկություններ են արվել դրանց արդյունավետ առաջխաղացման համար:

Աշխատանքի հիմնական փորձաքննությունները և տպագրումները:

Աշխատանքի հիմնական դրույթները զեկուցվել են գիտական կոնֆերանսներում. Երևանի պետական համալսարանի 100-ամյակին նվիրված միջազգային կոնֆերանսում, որը կայացել է ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում (Հայաստան, Երևան, 2018թ., սեպտեմբեր), կրթության և գիտության խորհրդին նվիրված միջազգային կոնֆերանսում, որը կայացել է Մ. Նալբանդյանի անվան Շիրակի պետական համալսարանում 2021թվականի նոյեմբերին: Աշխատանքի հիմնական դրույթներով հոդվածներ տպագրվել են գիտական հանդեսներում և կոնֆերանսների նյութերում:

Ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը: Աշխատանքը կազմված է ներածությունից, չորս գլուխներից՝ իրենց համապատասխան 15 ենթագլուխներից, եզրակացություններից ու առաջարկություններից, ինչպես նաև վկայակոչված 81 անուն գրականության ցանկից և չորս հավելվածներից:

Թեղի տեքստային մասը շարադրված է համակարգչային 115 էջերի վրա, որտեղ ներկայացված են նաև 14 տարբեր կառուցվածքի և բովանդակության գծագրեր, մեկ աղյուսակ, 40 գունավոր նկարներ, ինչպես նաև 4 բազմաչափ գծային ռեզրեսիոն մոդելներ:

Ատենախոսության ներածության մեջ հայցորդը ներկայացրել է հետազոտության օբյեկտը, առարկան, թեղի հիմնավորումները արդիականության կտրվածքով:

Առաջին գլխում քննարկվել են գրոսաշրջային գրավչության ձևավորման մեջ և հասարակական գիտակցության կարգավորման գործընթացում ԶԼՍ-ների դերի բացահայտման աղյուրների, օգտագործման և դրանց կառավարման՝ տարբերակների նկարագրությունները: Այսուղեղ հատուկ շեշտված են նաև գրոսաշրջային մամուլի կայացման փուլերի նշանակությունը:

Երկրորդ գլխում հայցորդը ներկայացրել է գրոսաշրջային հոսքերի ընթացքը ՀՀ անկախության ժամանակաշրջանի համար և ԶԼՍ-ների գրոսաշրջային դեստինացիաների վրա ազդեցության գնահատումը՝ բազմաչափ ռեզրեսիոն մոդելի օգնությամբ:

Հայցորդը բազմաչափ ռեզրեսիան մոդելների կազմման համար հարցումները իրականացրել է չորս լրատվամիջոցների միջոցով.

1. Թերթի;

2. Զրուաշրջային ամսագրերի;
3. Սոցանցերի;
4. Արքանյակային հետազոտությունների նյութերի միջոցով (որը սակայն չի հաջողվել իրականացնել):

Այդ հետազոտությունների միջոցով ստացված տեղեկատվությունը հեղինակին թույլ են տվել հանգել հավաստի ու արժեքավոր մի քանի եզրակացությունների, որոնք այնուհետև արտահայտվել են նրա առաջարկությունների մեջ:

Աշխատանքի 3-րդ գլխում հայցորդը ներկայացրել է իր հետազոտությունների արդյունքները մի քանի երկրների փորձերը զբոսաշրջային դեստինացիաների առաջխաղացման մեջ ԶԼՄ-ների դերը ու նշանակությունը այդ գործընթացում:

Այստեղ անհրաժեշտ ծավալով ու խորությամբ բացահայտվել են ծովափ ելք ունեցող ու չունեցող երկրների համար ԶԼՄ-ների կիրառման արդյունավետ փորձերը: Որպես սիպիկ օրինակներ նա ներկայացրել է Չեխիայի, Հունգարիայի, Վրաստանի և Ռուսաստանի ժամանակակից վիճակը այդ կոնտեքստում: Այս հարթության վրա որոշ իմաստով նա դիտարկել է նաև ՀՀ հնարավորությունները:

Առենախոսության 4-րդ գլուխը հայցորդը նվիրել է երկրի զբոսաշրջային իմիջի ձևավորման մեջ ԶԼՄ-ների դերի ու նշանակության բացահայտման խնդիրներին: Այս կոնտեքստում նա բացահայտել է զբոսաշրջային իմիջի հիմնական բաղադրամասերը և երկրի ճանաչելի կերպարը՝ որպես զբոսաշրջային դեստինացիայի գրավիչ իմիջի ստեղծման չափանիշի: Հայցորդը այդ նպատակով մանրամասը հետազոտել է Բապանիայի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի և Հունաստանի համար ճանաչում գտած ազգային սիմվոլները, դրանք որպես աշխարհագրական միջավայրը ներկայացնող ամենանշանակալի բաղադրամասեր: Նա փաստում է դրանց հատկանշական գծերի կարևորությունը, որոնք ի վերջո ստեղծում են տվյալ տարածքի գեղագիտական կերպարները: Հաշվի առնելով նշված երկրների կայացած փորձերը, նա ՀՀ-ի համար որոշակիորեն ճանաչված սիմվոլների միջոցով առաջարկում է մեր համար նույնպես ստեղծել “բրենդի զգացողություն” ու որպես ելակետ ընդունել Արարատ լեռ, մեր դուդուկը, հայկական կոնյակը, ծիրանը, նուտը, խաղողը, գինիները: Հայցորդը փաստում է նաև որպեսզի այդ ամենը դառնա “բրենդ” անհրաժեշտ է, որ մեր մեղիա-դաշտը ստեղծի “զբոսաշրջիկի հայացք և “բրենդի զգացողություն” ձևավորում սպառողի մոտ:

Ո. Կարդանյանի ատենախոսությունը ավարտվում է հետազոտություններից ստացված գիտական տեղեկատվության որոշակի ընդհանրացումներով, որտեղ առանձնացվել են նաև մի

քանի կարևոր, կիրառական նշանակություն պայմանավորող առաջարկությունները: Ուշագրավ են նաև ներկայացված հավելվածները:

Հայցորդ Ռ. Վարդանյանի ատենախոսությունը ամբիոնում մանրամասը քննարկումը ցույց տվեց, որ այնտեղ կան նաև որոշ բացթողումներ և վրիպումներ, որոնք արտահայտվել են.

1. Աշխատանքի մեջ ցանկալի կլիներ հաճախ հանդիպող “տերրитորիա” (“տարածք”) բառը փոխարինել “դեստինացիա” բառով՝ հաշվի առնելով, որ զրուաշրջության մեջ ավելի կիրառելի է հենց այդ տերմինը:
2. Թեզի մեջ բացակայում է կապը կայուն զարգացման և զիտատեխնիկական զարգացման միջև: Հաշվի առնելով արդի ժամանակաշրջանում կայուն զարգացման վճռորշ դերը, ցանկալի կլիներ անդրադարձ կատարել այդ հիմնախնդրին:
3. Ատենախոսության առաջին գլխի 3-րդ պարագրաֆում ցանկալի կլիներ ավելի խորը և որոշակի ուղղվածությամբ ուսումնասիրել ու բացահայտել հեռուստատեսության ազդեցությունը զրուաշրջության վրա:
4. Աշխատանքի տեքստային մասի շարադրման ժամանակ, ըստ երևույթի անհրաժեշտ չեր անդրադառնալ խորհրդային իշխանության զրուաշրջության փորձին:
5. Թեզի երրորդ գլխի 3-րդ պարագրաֆում շատ ավելի լավ կլիներ ուսումնասիրել ոչ միայն Վրաստանի և Ռուսաստանի, այլ նաև ուրիշ հետխորհրդային երկրների զրուաշրջության փորձին:

Քննարկման ժամանակ արձանագրվեց, որ Ռ. Վարդանյանի աշխատանքը կատարված է զիտական բարձր մակարդակով, ավարտուն է, ունի զիտատեսական որոշակի նշանակություն այն հաշվով, որ նա հետազոտել է արդի ժամանակի ՀՀ տնտեսության զարգացման հետ որոշակի առնչություն ունեցող հիմնախնդրի մի կարևոր հատված՝ *զրուաշրջային զիտականորեն հիմնավորված ոլորտի կայացման համար* և կատարել հիմնավորված, իրատեսական եզրակացություններ ու առաջարկություններ: Կատարված այդ հետազոտությունների արդյունքները կարելի են ներդնել հատկապես ԶԼՄ-ների միջոցով զրուաշրջային տարածքների գրագետ ու բազմակողմանի դիրքավորումը ապահովելու և որոշելու հասկանալ թե երբ, որ փուլում և կոնկրետ որ մեղիս ալիքը առավել շահավետ կծառայի դրված նպատակին հասնելու համար:

Ատենախոսության սեղմագիրը ընդգրկում է նրա հիմնական դրույթները: Հրատարակված հոդվածները ամբողջությամբ արտահայտում են ատենախոսության նյութը:

Ասենախոսությունը հազեցված է հետաքրքիր և ուշագրավ աղյուսակներով, գրաֆիկներով և բազմաթիվ նկարներով:

Հստ երևութին հայցորդին հաջողվել է լուծել իր առջև դրված խնդիրները, կատարել լուրջ գիտնականի վայել հետազոտություն, որտեղ երևում է նրա հիմնախնդրի վերաբերյալ սեփական արժեքավոր դատողությունները, վերլուծական միտքն ու տրամաբանական եզրահանգումները: Աշխատանքում մեր կողմից նշված թերությունները բոլորովին չեն ազդում դրա որակի վրա:

Ամբիոնի աշխատակիցները միաձայն գտնում են, որ Ռենա Վարդանյանի “ԶԼՄ-ների ինքորմացիայի դերը ՀՀ գրոսաշրջային գրավության ձևավորման մեջ” թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԻԴ.03.01 “Աշխարհագրություն” մասնագիտությամբ աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թվանշանին, բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի թեկնածուական թեզերի ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է աշխարհագրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Աշխատանքը քննարկվել է ՀՊՄՀ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2022թվականի սեպտեմբերի 14-ի նիստում: Նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, կենս. գիտ. դոկտոր Ռ. Սադոյանը, աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Կարապետյանը, դոցենտներ՝ Ս. Մուրադյանը, Ս. Դայանը, Ս. Մինասյանը, Ս. Կրոյանը, ասիստենտ՝ Վ. Հովհաննիսյանը, ամբիոնի մասնագետ Գ. Բարսեղյանը:

Խ. Արովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչի պաշտոնականուար, կենսաբանական գիտությունների դոկտոր՝

Ռուզաննա Սադոյան

Կենսաբանական գիտությունների դոկտոր Ռուզաննա Սադոյանի
ստորագրությունը հաստատում եմ՝

Խ. Արովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական բաժնուղար՝



Մարիամ Խաչիկիրյան

14.09.2022թ.